

թել չկարեն : Վասն որոյ յորդոր կկարգամք մեր Ազգայնոց, որպէս զի բարեհաճին և փութեան ըստ կարեաց ձեռն օգնութեան կարկառել այն ողորմելի եղբարց, որք բաղդին ձեռքը խաղալիք դարձած են, և քանի քանի անգամներ բաւական և մեծամեծ վլասներով ձնչուած կը տողորին ի զրունս անըմբերելի նեղութեանց և թշուառութեանց, ուրիմ սիրելի Ազգայինք, փութացէք և օգնեցէք նոյցա, և բարոյապէս միհիմարելով վերականգնեցէք թէ զնոսա և թէ նոյցա Եկեղեցին և ուսումնարանը, որպէս զի թող մեր կրիստոնի պարտքերը մեծապանծ փառաւորուին՝ յաւէտ զգացած և գիտացած լինելով սիրել մեր եղբայրները, և ի պահանջել հարկին կարեկից գտանել նոյնին վիճակաց, օգնելով թէ բարոյապէս և թէ նիւթապէս :

ԳՐԱԾՈՒՆ Ի ՆՈՐ—ՆԱԽԻՁԵԽԱՆ.

Պ. Յ. Տէր - Աբրահամեան բաւական հարուստ գրատուն բացած է ի Նոր - Նախիջևան, ուր նաև ի Ա. Պոլիս, ի Փարիզ, ի Աննետիկ, ի Աննայ, ի Զմիւնիա և յերուսաղէմ տպագրեալ զրեանց մեծ մաս կը գտնուին և կը վաճառուին :

Նոյնպէս նոյն Պարոն կիմացնէ յետ Հրութեամբ, որ գրասենեկին մօտ տպարան բանալց և մի լրագիր հրատարակելոյ համար չետամուտ է :

Աւրախութեամբ ընթերցաք Պօլոյ Ազգ. լրագրաց մէջ, զի բազմանուու և հնագէտ Պ. Մօրթման Գերմանացին յաջողածէ քսան և վեց տարի անխոն աշխատութենէն զիկ գտանել Վանայ և այլոց եղեցեց մէջ եղած սեպաման տառիք արձանագրութեանց բանալիքը, որով և ընթեռնուլ նոյն արձանագրութեամբ:

Միժայոյս եմք Աբրահամ ամսագրոյս մէջոցաւ հրատարակեալ սեպատառ արձանագրութեանց լուծումը ստանալ ի նոյն Պ. Մօրթմանէ, և հազորել մերազնեկից Բառ խնդրանց նորին, Աբրահայ արձանագրութիւնքը լուսանկարած յշած եմք ինքեան :

Վանայ արձանագրութեանց լուծման առթիւ յիշեալ հնագէտ պարունին յընթերցարանն Յունաց Կ. Պօլոյ համառատ իմն խօսած առենաբանութիւնը, զոր Կ. Պօլոյ ազգայիններէն Պ. Կմմանեւէլ Սայյեան համառատագրած և հրատարակած է տեղայս Աբրահամ լրագրի մէջոցաւ, ստորև կը հազորւեմք մերազնեկից կողմանցու

ՏՕՔԹԷՕՐ ՄՈՐԹՄԱՆ

ԵԿ ՎԱՆԱՑ ՍԵՊԱԶԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Դեկտեմբեր ամսոց 13/ 25 ին, ինչպէս որ Լէվանդ Հերալտ մայրաբաղաքիս օրագիրը կանխաւ ծանուցեր էր, (թերեւս ուրիշ թերթեր ալ) Բերա Յունաց Քլիւալը՝ հրաւեր մը կարդաց քաղաքիս լուսաւորեալ և ուսումնասէր հասարակութեան, բոլոր Եւրոպից մէջ իւր անհուն չմտութեամբը աշխարհածանօթ՝ մէծանուն Տօքթէօս Մորթմանի իմաստափական մակացութեանց վարդապետի ձեռքը պարերէ ի վեր անընթեանկի մնացած Վանայ սեպամէն արձանագրութեանց լուծումը աւետելով : Այս մեր սրտառուչ յիշատակաց և Հայութեան խանձարոց բնագաւառ՝ երբեմն երկրաւոր դրախտին՝ այժմ՝ կառավարութեան անձեռնչաստենէն, անօրէն և վարագասուն Քիւրտերու ձեռքը մնալով՝ դժպչի արիւնչեղութեանց, կրօնի և ազգութեան դէմ անընչա խոշանգաց, կուսից առևանգութեանց և քստմելի ոճրագործութեանց հանդիսարան եղած Վանայ չնաշխարհիկ բարձրաւանդակին համար եղած հրաւերիքին՝ Ճշմարիտ Հայու մը սիրար չէր կրնար չիրաբախել : Այս սիրարի գաւառու զոր սահմանակից Տուրութերան աշխարհին հետ միասին առնլով, բուն իսկ Հայկարան կը նամք կունել՝ մեր գիւցախուոն նահապետին շահատակութեանց ասպարէզ և իրեն ու որդուց և թոռանցը բնակարան լինելով իւր Հայկաշնի, Աստուածաշնի, Գերեզմանաց ըլոոց, Բէլուայ, Տշողի, Նմինուսայ հանդիսավայրք և յետոյ մեր Արայի Գեղեցիկ տարփածու աշխարհածագուհուոյն Շամիրամակերտի շինութեամբք ճոխացեալ ինչպէս որ ի զրոց և յաւանգութեանց զիտէնք մինչեւ այս օրս, այն աշխարհը որ յետ բազմադիմի և յարափոփոխ յաջող զիպաց և ձախող արծակից, միջին դարու ժամանակ՝ Արծրունի Վասպուրական ժագաւորաց նախանձընդդէմ միմեանց գեղեցիկ յօրինուածներովը և անկից առաջ ալ Արտաշէս Բ.ի օրերով Արտիմետի հրաշանըրկար շինուածներովը մեր ազգային պատմութեան ամենէն բանաստեղծական դարու թագաւորին և արբունեաց ու Սամինկան զջխոյի զարպաներով՝ զարգարուած, և յետոյ ժամանակաւ Թաթարաց արշաւանքին առջև Սենեկերիմայ Արծրունեաց թագաւորին չարախորհուրդ գաղթակա նութեամբն ի Սկրաստիա 800.000 հոգուովք արանց և կանանց՝ անապատացած, մինչև հիմնայ բազմացել Քրիստու տէրէպէ յիներու, աւազակաց որջ ու կաղաղ դարձած ըլլալովը հանգերձ դարձեալ հարստահարեալ, նեղեալ, վշուցեալ բազմաչարչար Հայութեան բուն իսկ այժմեան Քիւրտիստանու և հին Կորդուաց ու Մոկաց քարայեներուն բերանը՝ վերջին պատուար և սահման հանդիսացած կը կենայ :